

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի
ընդլայնված նիստի

29 հունվարի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Մ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

Նիստին հրավիրվել էր մասնաճյուղի տնօրեն Մ. Ա. Առաքելյանը և
ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Յ. Դավթյանը:

Նիստին մասնակցում էին նաև ամբիոնների դասախոսներ և ֆակուլտետի
աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի դեկանի հաշվետվություն:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան /

2. Հետազոտությունների ծավալի աճի, դասախոսական կազմի-ուսանողների
ներգրավվածության ընդլայնում:

/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց
դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի
հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի
նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15 ուս. տարվա I
կիսամյակում ֆակուլտետում իրականացված աշխատանքերի մասին: Ըստ
ուսումնական գործընթացի հաստատված ժամանակացույցի ամբիոնների և

դեկանատի համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացվել են բոլոր պահանջները: Կապված մասնագիտությունների փոփոխության հետ առաջընթաց է նկատվում : Ուսանողների շրջանում մասնագիտական հետաքրքրությունները շատանում են: Համակարգչային մասնագիտական լաբորատորիան օգտագործվում է նպատակին: Այս առումով հարկ է նշել, որ ֆակուլտետի երկու մասնագիտությունների ուղղությամբ անհրաժեշտ է լուրջ աշխատանք իրականացնել, որպեսզի մեր շրջանավարտը աշխատաշուկայում լինի մրցունակ:

Ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանով նախատեսված նիստերը ըստ օրակարգի անց են կացվել համապատասխան ժամանակամիջոցում: Իրականացվել են նաև նախորդ նիստերում ընդունված որոշումները: Ֆակուլտետում դասաժամի բացթողում չի եղել, կրճատվել է ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները, դասախոսական կազմի և աշխատակիցների կողմից կարգապահական խախտումներ չի եղել, կազմակերպված անց է կացվել քննաշրջանը /դեկանի հաշվետվությունը կցվում է արձանագրության տեքստին/:

Այնուհետև նա անցավ քննաշրջանի արդյունքների քննարկմանը: Ըստ կուրսերի և ուսուցման ձևի /ընդհանուր, անվճար և վճարովի/ ներկայացրեց առաջադիմությունը, որը կցվում է արձանագրության տեքստին:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին ակադեմիական պարտք ունեցող ուսանողների հետ կազմակերպել ամենօրյա լրացուցիչ կոնսուլտացիաներ:

Մ. Ա. Զաքարյանը միաժամանակ ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի I լուծարքային շրջանի գրաֆիկը, որը կկազմակերպվի 30.01.-14.02.2015թ. ժամանակահատվածում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Յուցուլյանը, Ռ. Ռ. Քամայանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին, ավելացնելով, որ ֆակուլտետում պահանջին և պարտավորվեցին կազմակերպել լրացուցիչ կոնսուլտացիաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին կազմակերպել կոնսուլտացիաներ՝ ընդգրկելով նաև մասնագիտությունների կուրսղեկին:
2. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի I լուծարքային շրջանի գրաֆիկը:

Այնուհետև ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ Ս. Գ. Ղևոնդյանը նշեց, որ ֆակուլտետի ՈւԳԸ անդամները հնարավորինս կօգնեն կազմակերպչական և ուսումնական գործընթացում, որպեսզի լուծարքային շրջանում ապահովվի հնարավորինս բարձր առաջադիմություն:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, ֆակուլտետում հետազոտությունների մասին, ընդգծելով, որ անհրաժեշտ է ակտիվացնել այդ աշխատանքները, ընդլայնելով ուսանողների ներգրավվածությունը: Նա հանձնարարեց մինչև ուսումնական տարվա ավարտը այդ ուղղությամբ կատարված աշխատանքները ներկայացնել ֆակուլտետի խորհրդի նիստի քննարկմանը: Նա անդրադարձավ „Քարտեզագրություն և կադաստրային գործ,, մասնագիտության I կուրսին, քանի որ նոր մասնագիտություն է, անհրաժեշտ է այդ ուսանողներին ևս ընդգրկել զեկույց-ընթերցումներում, որը հետագայում խթան կհանդիսանա նշված մասնագիտության կայացման գործում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել ամբիոնների վարիչներին ավելացնել հետազոտությունների ծավալի աճը՝ ընդլայնելով դասախոսական կազմի- ուսանողների ներգրավվածությունը:

ՆԱԽԱԳԱՀ

Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
 Բնական գիտությունների ֆակուլտետ
 գեոեկային, Երեկոյան, հեռակա ուսուցում
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 2014-2015 ուս. տարվա I կիսամյակ

Անվճար ուսուցում

Ձև 34

Խումբ	Ճանաչողություն	Ուս. թիվը ընդ. վերջ.	Այր թվ. ակադ.	Պարտավ. հանձն. ընդ. ընդ.	Դեռ. ներկայաց.		Դանձմել են					Ստացել են անբավարար գնահատ.				Բացարձակ արժ. %	Ավ. ուս. կենտրոն	Մեթ. ընդ. արդ. հիմ. վրա	Փոխադրվ. հաջ. կարգ		
					հարթ պատճառ	անհ. պատճառ	Բոլոր առարկան.	միայն զեր. գծով	Միայն զեր. և արվ.	հատը զնտ.	Միայն ավարտ	Ընդ.	Մեկ անգ.	Երկու անգ.	Երեք և ավել				Ընդ.	Այր թվում	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ԻԿԱ I	Ինֆորմատիկա և Կ/	4					4	0	2	2	0	0	0	0	0	100.00					
ԻԿԱ II	Ինֆորմատիկա և Կ/	4					4	0	4	0	0	0	0	0	0	100.00					
ԸՆԴ. Ինֆորմատիկա և		8					8	0	6	2	0	0	0	0	0	100.00					
ԿԱ/Ֆ III	ԿԱ և Ֆիզիկա	4					4	0	4	0	0	0	0	0	0	100.00					
ԸՆԴ. ԿԱ և Ֆիզիկա		4					4	0	4	0	0	0	0	0	0	100.00					
ՔԿԳ I	Քարտեզագր. և Կ/Գ	1					0	0	0	0	0	0	0	0	0	0.00					
ԸՆԴ. Քարտեզագր. և Կ/		1					0	0	0	0	0	0	0	0	0	0.00					
ԸՆԴամենց ֆակուլտետում		13					12	0	10	2	0	0	0	0	0	92.31					

Դեկան՝

Մ. Ա. Զաքարյան

1/26/2015

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
 Բնական գիտությունների ֆակուլտետ
 զեռնեկային, Երեկոյան, հեռակա ուսուցում
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆՆԱՇՐՁՆՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 2014-2015 ուս. տարվա I կիսամյակ

Վճարովի ուսուցում **ՉԼ 34**

Խումբ	մասնագիտություն	Ուս. ընկերություն	Այր քվ. ան. րժ.	Պատմական ան. րժ.	ԸՆԴ. րժ. րժ.	ԴՆՏ Երկապագ.						Ստացել են անհրաժեշտ գնահատ.				Բացարձակ արժ. %	Ավ. ուս. կես-տար. սը	Մեթ. րժ. տար. րժ.	Գեր. ընդ. արդ. րժ. վրա	Փոխարդ. հաջ. կոդ	Այր քվ. ան. րժ.
						հարգ. պատ. ծառ.	անդ. պատ. ծառ.	Բոլոր արտ. րժ. ան.	միայն գեր. րժ. ան.	միայն գեր. և սպ.	հաջ. գնահ.	միայն ավարտ.	ԸՆԴ.	Մեկ անգ.	Երկու անգ.						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ԻՎԱ I	Ինֆորմատիկա և Կ/	17					11	0	0	10	1	6	3	1	2	64.71					
ԻՎԱ II	Ինֆորմատիկա և Կ/	20					11	0	1	10	0	9	2	2	5	55.00					
ԸՆԴ. Ինֆորմատիկա և		37					22	0	1	20	1	15	5	3	7	59.48					
ԿԱՅ III	ԿՄ և ֆիզիկա	10					7	0	2	5	0	3	1	0	2	70.00					
ԸՆԴ. ԿՄ և ֆիզիկա		10					7	0	2	5	0	3	1	0	2	70.00					
ԲԿԳ I	Քարտեզագր. և Կ/Գ	5					5	0	2	2	1	1	1	0	0	100.00					
ԸՆԴ. Քարտեզագր. և Կ/		5					5	0	2	2	1	1	1	0	0	100.00					
ԸՆԴամենք ֆակուլտետում		52					34	0	5	27	2	19	7	3	9	65.38					

Ղեկան՝

Մ. Ա. Զաքարյան

1/26/2015

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
 Բնական գիտությունների ֆակուլտետ
 ցեղեկախճ. Երեկոյան, հեռակա ուսուցում
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱՆՇՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 2014-2015 ուս. տարվա I կիսամյակ

Ընդհանուր ուսուցում ԶԼ 34

Խումբ	մասնագիտություն	Ուս. թիվը ցեղ. վերջ.	Այդ թվ. ալ. ան. թվ.	Պարտաձևի անճը ցեղ. թույլ. ցեղ.	Չեն ներկայաց.		Բանճնել են						Ատաղել են անբավարար գնահատ.				Բացարճակ առաջ %	Այ. ուս. կես կողմ. ալ.	Մնաց. ԵՊ. Կ. Կ. Կ. Կ. Կ.	Գեղ. Կ. Կ. Կ. Կ. Կ.	Փոխադրվ. հաշ. կողմ.	
					հարգ պատ ճառ.	անհ. պատ ճառ.	Բոլոր առարկ. պե.	Պայց գեր գնահ.	Միայն գեղ. Կ. Կ.	հատը գնահ.	Միայն ավարտ.	Ընդ.	Սեկ. աճ.	Երկու աճ.	Երեց Կ. Կ. Կ.	Ընդ.					Այդ թվում	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ԻՎՄ I	Ինֆորմատիկա և Կ/	21						15	0	2	12	1	8	3	1	2	71.43					
ԻՎՄ II	Ինֆորմատիկա և Կ/	24						15	0	5	10	0	9	2	2	5	62.50					
ԸՆԴ. ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ և Կ/		45						30	0	7	22	1	15	5	3	7	66.67					
ԿԱՅ III	ԿԱՄ և ֆիզիկա	14						11	0	6	5	0	3	1	0	2	78.57					
ԸՆԴ. ԿԱՄ և ֆիզիկա		14						11	0	6	5	0	3	1	0	2	78.57					
ԲՎԳ I	Քարտեզագր. և Կ/Գ	6						5	0	2	2	1	1	1	0	0	83.33					
ԸՆԴ. Քարտեզագր. և Կ/		6						5	0	2	2	1	1	1	0	0	83.33					
ԸՆԴամենը ֆակուլտետում		85						46	0	15	29	2	19	7	3	9	70.77					

Դեկան՝

Ս. Ա. Զաքարյան

1/26/2015

2014-2015 ՈՒՍ. ՏԱՐՎԱ I ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԴԵԿԱՆԻ Ժ/Պ Ս. ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Նախ ցանկանում եմ իմ անկեղծ շնորհակալությունը հայտնեմ ֆակուլտետի ողջ անձնակազմին, որոնք ոչ մի ջանք չեն խնայում իրենց աշխատասիրությամբ, պատրաստակամությամբ և աշխատանքի նկատմամբ իրենց պատասխանատվությամբ, որպեսզի ֆակուլտետի աշխատանքները պահեն բարձր հիմքերի վրա:

Նշեմ, որ ինձ հասած, այսպես կոչված, <<ժառանգությունը>> աղքատ չի եղել: Ֆակուլտետում գործում է բարոյահոգեբանական, բարի-զիջողական և համագործակցության աշխատանքային մթնոլորտ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետը, լինելով ՀՀ հյուսիս-արևելյան տարածաշրջանի միակ պետական բնագիտական հոսքի մասնագիտական կրթօջախ, տնօրինության և ուսումնավարչության անմիջական օժանդակությամբ իր առաքելությունն է համարում և իրականացնում է հասարակության ներուժի դրսևորման, երիտասարդ սերնդին գիտամշակութային, բազմակողմանիորեն, մասնագիտական ուղղվածության զարգացման, աշխատաշուկայում արդի պահանջներին համապատասխան մասնագետների և հիմնարար արժեքների ապահովումը:

Որակյալ կրթությունն ապահովելու հետ մեկտեղ ֆակուլտետի գործունեության կարևորագույն մասն է կազմում նաև հաստատելու ուսանողակենտրոն միջավայր՝ հարատև կրթության ռազմավարությունը:

Ֆակուլտետի գործունեության ուղղորդվածության հիմքը կազմում է ռազմավարական ծրագրի հիմնադրույթները, որը իր մեջ ներառում է ծրագրային բարձր չափորոշիչներ՝ ուսման որակի բարձրացում հարատև կրթության, քաղաքակիրթ արժեքների պահպանման և հարստացման կայունությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետում սովորում են 65 ուսանողներ, 4 ուսանողներ հունվար ամսին գորակոչվել են ՀՀ զինված ուժեր, նույնքան էլ վերադարձել են ՀՀ զինված ուժերից:

Ֆակուլտետը ունի 25 ամրագրված աշխատողներ, այդ թվում՝ 3 գործավարներ, 2 լաբորանտներ և 20 դասախոսներ: Ֆակուլտետում գործում են 2 ամբիոններ՝

1. <<Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության>> ,ամբիոնի վարիչ Յուզուլյան Ա.,

2. <<Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների>>,ամբիոնի վարիչ Քամալյան Ռ.:

2-րդը՝ <<Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների>> ամբիոնը, ձևավորվել է այս ուսումնական տարվա սկզբին, և արդեն բավականին աշխատանքներ են կատարվել ամբիոնի աշխատանքները նորմալ հունի մեջ գցելու համար:

Ըստ նախատեսված ժամանակացույցի՝ ամբիոնը կազմակերպել է գիտական զեկուցումներ, որոնք իրականացվել են ամբիոնի փորձառու երիտասարդ դասախոսների կողմից: Ամբիոնը կազմակերպել է հետազոտական աշխատանքներ՝ ընդգրկելով նաև ուսանողներին: Թափոնների օպտիմալ կառավարում թեմայով Ա. Միմոնյանը, ով մասնակցել էր գերմանական GIZ կազմակերպության կողմից վերապատրաստման դասընթացի, անց է կացրել դասընթաց, որն ուղեկցվում էր շնորհանդեսով: Ուսանողներն ստացան լրացուցիչ գիտելիքներ թափոնների նվազեցման և վերամշակման, վերօգտագործման մասին:

Վաղուց կայացած է արդեն <<Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության>> ամբիոնը: Ուսումնական տարվա սկզբից ամբիոնի վարիչ Ա. Յուզուլյանը առաջարկեց ուսումնական տարվա I կիսամյակում մեկ դասախոսություն կարդացվի որևէ օտար լեզվով: Առաջարկն ընդունվեց : Ա. Յուզուլյանը և Ա. Ամիրյանը դասախոսություններ են կարդացել ռուսերեն, իսկ Մ. Զաքարյանը՝ անգլերեն: Արդյունքը՝ ուսանողների մեջ առաջացել է ոգևորություն և հետաքրքրություն: Նրանցից ոմանք այս եկող ուսումնական տարում կպատրաստեն փոքրիկ զեկույցներ նշված լեզուներից որևէ մեկով :

Հարկ էմ համարում նշել, որ ֆակուլտետի բոլոր դասախոսները կամ գրեթե բոլորը այս ուսումնական տարվա սկզբից ավարտել են առարկայական ծրագրերի փաթեթների I փուլը 1 առարկայից: Այս պրոցեսը կշարունակվի նաև այս կիսամյակ: Այս փաթեթները կազմելու գործում պետք է հատուկ շնորհակալությունս հայտնեմ Մ. Ճաղարյանին դասախոսական անձնակազմին օժանդակելու, օգտակար խորհուրդներ և ցուցումներ տալու համար:

Իմ և ամբիոնի վարիչ Ա. Յուզուլյանի կողմից պարբերաբար կատարվել են դասալսումներ ֆակուլտետում դասավանդող բոլոր դասախոսների մոտ:

Չեմ կարող չնշել ֆակուլտետում դասավանդող այլ դասախոսների ջանքերը ուսանողների հետ աշխատանքում:

Այսպես՝ նոյեմբեր ամսին <<Հայոց լեզու և գրականության>> դասախոս Ա. Հասանյանը I կուրսի ուսանողների հետ կազմակերպել էր բաց դաս՝ նվիրված Համո Սահյանի պոեզիային: Դեկտեմբեր ամսին II կուրսի ուսանողները անգլերենից կազմակերպել են բաց դաս՝ դասախոս Է. Թեմրազյանի գլխավորությամբ:

Պետք է սիրով նշեմ, որ <<Քարտեզագրություն և կադաստրային գործ>> մասնագիտության նկատմամբ երիտասարդության շրջանում աճում է հետաքրքրությունը և մեր համոզվածությամբ եկող ուսումնական տարում կունենանք մի քանի անգամ լավ ուսանողներ թե՛ քանակական, թե՛ որակական տեսակետից:

Մասնագիտության կայացման գործում իր մեծ ներդրումն ունի Պ. Ասիլբեկյանը: Այստեղ կան դեռ շատ անելիքներ: Հասկանալի է, որ շրջանավարտները կարող են կադաստրային և քարտեզագրության աշխատանքներ կատարել հողի, շարժական և անշարժ գույքի ոլորտներում: Այդ հմտությունները լիարժեք ձեռք բերելու համար հետագայում անհրաժեշտ կլինի <<Քարտեզագրության և գեոինֆորմատիկայի>> լաբորատորիա, որոշ սարքավորումներ՝ տախտմետր և այլն: Նշենք, որ այս մասնագիտության ուսանողները եղել են ԵՊՀ-ում դասախոս Սմբատ Դավթյանի ղեկավարությամբ, անց են կացրել մի շարք պրակտիկ աշխատանքներ:

Ֆակուլտետում գործում է մասնագիտական գրադարան: Գրադարանի պատասխանատուն է Մանյա Ազարյանը: Ակտիվացել է ուսանողների հետաքրքրությունը մասնագիտական գրականության նկատմամբ: Դուրս է գրվել և Մ. Ազարյանին է ներկայացվել այս հիմնական գրականության ցանկը, որը խիստ անհրաժեշտ է ֆակուլտետի ուսանողներին: Հույսով ենք՝ նոր ուսումնական տարում այս գրքերը տեսնել մեր գրադարանում:

Լավ վիճակում է նաև ուսանողական կյանքը ֆակուլտետում, որին աջակցում է տնօրեն պարոն Առաքելյանը: Այդ աշխատանքները միշտ բարձր մակարդակի են պահում ՈՒԽ նախագահ Անդրեյ Սաֆարյանը, ՈՒԳԸ նախագահ Սոնա Ղևոնդյանը և մի շարք ակտիվ ուսանողներ:

Մասնաճյուղում կազմակերպված ինտելեկտուալ խաղին ֆակուլտետի Ի/ԿՄ II կուրսն արժանացել է I մրցանակի: Մասնաճյուղում կազմակերպված մի շարք միջոցառումներում իրենց անմիջական մասնակցությունն են ունեցել նաև ֆակուլտետի ուսանողները:

Քննական պրոցեսը բավականին թափանցիկ է ֆակուլտետում: Յուրաքանչյուր ընթացիկ և վերջնական քննությունից հետո ուսանողների հետ քննարկելուց հետո այն փակցվում է պատին: Այդ քննությունների արդյունքների հիման վրա է ձևավորվում անվճար և վճարովի տեղերի բաշխումն ու կրթաթոշակների տրամադրումը:

Հարկ եմ համարում նշել, որ նշված մասնագիտությունների ուսումնական գործընթացի իրականացման համար մշակվում և իրականացվում է կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ: Այս հարցերում ֆակուլտետին միշտ իր օժանդակությունն է բերում ուսումնական բաժինը՝ բաժնի վարիչ Ա. Դավթյանի ղեկավարությամբ:

Ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը բոլոր գործընթացներում: Ֆակուլտետում կան մասնագիտական համակարգչային 2 լաբորատորիաներ՝ հազեցած ժամանակակից տեխնիկական հնարավորություններով:

Այսպես՝ ոչ մի ջանք չի խնայվում ֆակուլտետի աշխատակիցների կողմից ուսանողների որակյալ կրթության, դաստիարակչության, կարգապահության և աշխարհայացքի ձևավորման համար:

Դա ամենօրյա մեր աշխատանքն է, որ փորձում ենք կատարել առավելագույնս լավ ձևով:

2014-2015 ուս. տարվա I կիսամյակում տպագրվել են հետևյալ գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունները.

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. Մ. Ա. Ճաղարյան, Տվյալների կառույցներ, ԵՊՀ հրատ. Երևան 2014թ. Էջ 85
Հոդված

1. R. R. Kamalian, P. A. Petrosyan, On sum edge-coloring of regular, bipartite and split graphs, Discrete Applied Mathematics 165,2014, pp. 263-269

2. Սիմոնյան Ս. Հ., Ադամյան Գ. Վ., Սիմոնյան Ա. Ս., Պռազյան Լ. Վ., Մուր-Պենրոուզի կոմպլեքս միապարամետրական մատրիցների ընդհանրացված հակադարձների որոշման մեթոդներ (20-28), ԲԱՆԲԵԴ ՀՊՃՀ, ՀՏԴ 621.52+511.52
Զեկուցումների թեզիս

1. N. N. Davtyan, R. R. Kamalian, An Upper Bound for the Parameter μ_{21} of Regular Graphs, Proceedings of the CSIT Conference, Yerevan, 2013, pp. 65-67.

Վերջում ուզում եմ հատկապես շնորհակալություն հայտնել տնօրեն պարոն Առաքելյանից: Չնայած ֆակուլտետը փոքր է, սակայն միշտ եղել է և կա տնօրենի ուշադրության կենտրոնում: Մեր խնդիրները, որոնք առաջանում են և ներկայացնում ենք նրան, միշտ օժանդակություն և դրական լուծում է գտնում նրա կողմից: